ԿԱՐԾԻՔ

«Մատչելի բնակարան զինծառայողներին» պետական աջակցության նպատակային ծրագիրը հաստատելու և սպայական կազմի զինծառայողների կողմից բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիպոտեկային վարկավորման կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

««Մատչելի բնակարան զինծառայողներին» պետական աջակցության նպատակային ծրագիրը հաստատելու և սպայական կազմի զինծառայողների կողմից բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի[1] վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարծիքը հանգում է հետևյալին.

1. Նախագծի 1-ին հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետում սահմանված է, որ վարկի տարեկան տոկոսադրույքը առավելագույնը 7% է, որից պետության կողմից սուբսիդավորվում է վարկի տոկոսագումարի առավելագույնը 3 տոկոսային կետը:

Հարկ է նկատել, որ տոկոսային կետը կարող է տարբեր պայմանական չափեր ունենալ (օրինակ՝ 1 տոկոսային կետը կարող է սահմանվել 2 տոկոսի չափով):

Տարակերպ մեկնաբանություններից զերծ մնալու նպատակով առաջարկում ենք «տոկոսային կետը» բառերը փոխարինել «տոկոսը» բառով:

2. Նախագծի 1-ին հավելվածի 11-րդ կետով սահմանված է, որ ծրագրի 8-10-րդ կետերում նշված, ինչպես նաև օրենքով սահմանված այլ հիմքով զինվորական ծառայությունից արձակվելու դեպքերում զինծառայողի համար դադարում են պետության կողմից վարկի տոկոսի սուբսիդավորման և եկամտահարկի վերադարձման պայմանները:

ՀՀ հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց աշխատավարձի և դրան հավասարեցված

1 Այսուհետ՝ Նախագիծ

վճարումների մասով Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված եկամտային հարկը վերադարձվում է:

Հետևաբար, այլ վարձու աշխատանքի անցնելու դեպքում չի դադարի եկամտահարկի վերադարձման պայմանները, և անձն ամեն դեպքում կօգտվի նշված արտոնությունից: Ուստի, տարակերպ մեկնաբանություններից զերծ մնալու նպատակով առաջարկում ենք Նախագծի 1-ին հավելվածի 11-րդ կետը վերաձևակերպել:

3. Նախագծի 1-ին հավելվածի 12-րդ կետով սահմանված է, որ վարկավորման ծրագրի ընթացքում զինվորական ծառայությունից արձակվելուց հետո կրկին անգամ զինվորական ծառայություն անցնելու դեպքում զինծառայողի համար վերականգնվում են սույն որոշմամբ սահմանված կարգով պետության կողմից վարկի տոկոսի սուբսիդավորման և եկամտահարկի վերադարձման պայմանները:

Միաժամանակ, Նախագծով կարգավորված չէ անօրինական կերպով ծառայությունից արձակված զինծառայողի ծառայության վերականգնման դեպքում պետության կողմից վարկի տոկոսի սուբսիդավորման և եկամտահարկի վերադարձման պայմաններից օգտվելը շարունակելու հարցը, ինչը կարող է խնդրահարույց լինել զինծառայողների իրավունքների վերականգնման անհրաժեշտության տեսանկյունից:

Ուստի, առաջարկվում է Նախագծի 1-ին հավելվածի 12-րդ կետում նախատեսել նաև համապատասխան կարգավորումներ անօրինական կերպով ծառայությունից արձակված զինծառայողի ծառայության վերականգնման դեպքում պետության կողմից վարկի տոկոսի սուբսիդավորման և եկամտահարկի վերադարձման պայմաններից օգտվելը շարունակելու վերաբերյալ:

4. Նախագծի 2-րդ հավելվածի 6-րդ կետում սահմանված է, որ դիմում-հայտում նշվում են զինծառայողի անունը, ազգանունը, հայրանունը, զինվորական կոչումը, ստորաբաժանումը, *էլեկտրոնային փոստի հասցեն*, հեռախոսահամարը, ընտանիքի կազմը (նշելով անունները, ազգանունները և զինծառայողի հետ ազգակցական կապը), *ակնկալած բնակարանի (բնակելի տան) սենյակների թիվը*:

Պետք է նկատել, որ Նախագծում էլեկտրոնային ծանուցման կարգ նախատեսված չէ, սակայն էլեկտրոնային հասցե չունենալու դեպքում զինծառայողի դիմում-հայտը կարող է

չընդունվել: Եթե էլեկտրոնային հասցե ներկայացնելու պահանջը նպատակ ունի դիմում-հայտի ընթացքի մասին զինծառայողին տեղեկացնել էլեկտրոնային ծանուցման եղանակով, ապա առաջարկում ենք Նախագծի կոնկրետ դրույթներում նշել, թե որ տեղեկություններն են ուղարկվում էլեկտրոնային ծանուցման միջոցով: Հակառակ դեպքում՝ առաջարկում ենք հավելվածի 6-րդ կետում «հասցեն» բառից հետո լրացնել «(առկայության դեպքում)» բառերը:

Բացի այդ, նշվում է, որ դիմում-հայտում պետք է նշվի նաև ակնկալած բնակարանի (բնակելի տան) սենյակների թիվը, մինչդեռ Նախագծի 1-ին հավելվածի 6-րդ կետի համաձայն՝ բնակարանների կամ բնակելի տան արժեքի առավելագույն չափը որոշվում է ոչ թե ըստ սենյակների թվի, այլ ըստ մակերեսի: Հետևաբար, անհրաժեշտ է դիմում-հայտում պահանջել կամ ներկայացնել ակնկալվող բնակարանի առավելագույն մակերեսը կամ ընդհանրապես նման պահանջ չնախատեսել:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ